

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵՑՆ

ԱՐՅԱԻԻՐՔԻ ՕՐԵՐ

I

ՍԱՄՍՈՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Պատերազմից առաջ, Սամսոնի հայութիւնը հաշւում էր 800-900 տուն, կլոր թւով 5000 բնակիչ: Յոյները մօտ 10, թուրքերը 15-20 հազար հոգի էին: Երեք ժողովուրդները ապրում էին անջատ թաղերում: Հայկական թաղը տարածւած էր քաղաքի հիւսիսային կողմը եւ շատ չնչին բացառութեամբ ամփոփում էր իր մէջ քաղաքի բոլոր հայերին: Յունական եւ թրքական թաղերը տեղ-տեղ խառն բընակչութիւն ունէին: Յունական թաղը գտնուում էր քաղաքի հարաւարեւմտեան մասում, իսկ թիւրքերը սեպի պէս մտել էին երկու թաղերի միջեւ՝ բաժանելով հայերին յոյներից:

Հայկական թաղը ունէր երկու դպրոց եւ մէկ մանկապարտէզ: Երկսեռ աշակերտութեան թիւը 7-8 հարիւրից պակաս չէր. դպրոց էին յաճախում թաղի գրեթէ բոլոր երեխաները:

Ուսուցիչների մէջ միակ սկսնակը ես էի: Մնացածները տարիների փորձառութիւն ունեցող եւ իրենց դործին գիտակ մանկավարժներ էին:

Դպրոցի ամենահին ուսուցիչն էր Տերունի Նշան Զատրմեանը, որը յայտնի էր քաղաքում «Նշան Էֆէնտի» անունով: Աշակերտները նրան ասում էին «միւսիւ Նշան»: Նշան Էֆէնտին 70-ը բոլորելու վըրա էր եւ Սամսոնի հնագոյն բնակիչներից մէկն էր: Ուսուցչութեամբ սկսել էր պարապել դպրոցի դոյտութիւնից շատ առաջ: Իրբեւ տեղական եկեղեցու ամենահին դպիրը, նա մասնակից էր թաղի բոլոր ծնունդներին, մկրտութիւններին, թաղման, պսակադրութեան եւ այլ արարողութիւններին: Հայ, յօյն, թիւրք-բոլորն էլ ճանաչում էին այդ բարի եւ հազւագիւտ մարդուն: Իր հերթին Նշան Էֆ. մատի վրա կարող էր հաշւել թաղի բոլոր բնակիչներին: Նա ոչ միայն



ԱՍՏՄԱՆԻ ԴՊՐՈՑԻ ՆԵԱԴԱԼՈՒՄԲԸ

(Կենտրոնական տեսուչ Արա Մամիկոնեան, աջ կողմը՝ նեագի դասատու Ծննիկ Պալըգնեան).

Այս եւ հետագայ նկարները առնւած են Տիկ. Ան. Պալըգնեանից, թրիւտէլ.

տեղեակ էր ամէն մի աշակերտի անցեալին ու ներկային, այլեւ յիշում էր, թէ որ աշակերտի հայրը, մայրը, քեռին եւայլն ինչպէս էին սովորում:

— Ծօ՛, հո՛րթ, ըսէ նայինք դուն որո՞ւ ելած ես, ասում էր նա ծոյլ կամ չար աշակերտին:

— Եթէ լսեմ հօրդ՝ մեղք է, եզի մը պէս խոնարհ տղայ էր. եթէ լսեմ մօրդ՝ անարդարութիւն է, ան ջուրի պէս կը կարդար դասը:

Նշան էֆ. հնուց ի վեր հետաքրքրում էր եկեղեցական հարցերով: Մարտիկեանի նախարարութեան օրով, մի օր ցրւիչը ուսուցչանոցում նրան յանձնեց մի շաբաթաթերթ «Զանգակներ» անունով, որ տպւել էր 1902 թւին, Պոլսում: Նշան էֆ. բացարեց, որ շաբաթաթերթին բաժանորդագրւել է տասը տարի առաջ:

Դպրոցի վարի դասարաններում նշան էֆ. դասաւանդում էր կրօն: Բայց աշակերտները խնդրում էին պատմել բազմիցս լսած «Դաւիթ Անյալթի և Գողիաթի պատմութիւնը»: Քանի՛, քանի անդամներ ինձ պատահել է հերթափահէ հանգամանքով դասարան մըսնել և ոտքի ելած մանկիկների ծափահարութիւնները գաղարեցնել այդ «պատմութեան» ընթացքում:

Եթէ նշան էֆ. դաս աւանդելու տրամադիր չէր, բաց էր անում աշակերտների ցուցակը եւ, ստուգում կատարելով, խօսում էր ներկայ աշակերտների վարք ու բարքի մասին: Այդ ձեւով նա ժամանէ հաղիւ 5-10 աշակերտ էր ստուգում:

Զմրան օրերի դասամիջոցներին, դպրոցի ընդարձակ միջանցքում տեղաւորւած թիթեղեայ մեծ վառարանի մօտ փոքր աշակերտները սովորաբար խմբւած էին նշան էֆ. չուրջը:

— Այս ինչքա՞ն մաղեր կան ձեռքերուդ վրա, միւսիւ նշան, - ասում էր աշակերտներից մէկը, տնտղելով նրա բըդոս ձեռքը:

— Այդ ի՞նչ է որ, հապա մէկ տեսնես, թէ ի՞նչ մաղեր կան-յօրապնընջելով պատասխանում էր նշան էֆ. :

Երբեք առանձին աշակերտին չէր պատժում, բայց բարկացած դէպքերում դասերից յետոյ մի ժամով վար էր դնում ամբողջ դասարանը և ինքն էլ մնում էր նրանց հետ: Այդպիսի դէպքերում եղար սպառնական հայեացք էր սեւեռում յանցաւոր դասարանի աշակերտների վրա և երբ տիրում էր գերեզմանային լուսթիւն, գլուխը դնում էր ամբոխի գրասեղանի վրա ու քնում: Այնուհետեւ, աշակերտները ոտքերի ծայրով զգուշութեամբ մէկ - մէկ դուրս էին շակերտները ոտքերի ծայրով զգուշութեամբ մէկ - մէկ դուրս էին շակերտները ոտքերի ծայրով զգուշութեամբ մէկ - մէկ դուրս էին շակերտները ոտքերի ծայրով զգուշութեամբ մէկ - մէկ դուրս էին, նշան էֆ. արթնանում էր և վերէն - վար չփելով դէմքը՝ մա-

նըր քայլերով դիմում էր դէպի տուն :

Բայց Նշան էֆ. իբրեւ ուսուցիչ Սամաննի գալրոցում բացառութիւն էր : Եւ այդ տարիքի մէջ պահում էին գալրոցում, որովհետեւ այլ կերպ նրա կեանքը ուրիշ ոչ մի իմաստ չունէր :

Շատ կարող, փորձառու ուսուցիչներից մէկն էր Երւանդ Խանէդանեանը : Հին դաշնակցական էր : Դպրոցում դասաւանդում էր Փրանսերէն : Երկար տարիներ պաշտօնավարել էր Տրապիզոնի հայկական վարժարանում : Ապրել էր այնուղ 1894-1895-ի հայկական ջարդերի արհաւելքները : Ընդհանրապէս Տրապիզոնում ապրած շըրջանը նրա համար մի տեսակ «սպատիչ» արժէք էր ստացել : Եւ չեմ յիշում որեւէ լուրջ խնդիր, որի մասին խօսելիս Խանէդանեանը, իբրեւ օրինակ, կամ հիմնաւորում չասէր - «Տրապիզոնին մէջ...» : Վրզոված դէպքերում ինքն իր մասին ասում էր՝ «կատաղի ևմ» : Իրապէս ամենաբարի, ընկերական, հիւրասէր, գւարթ բնաւորութեան տէր մի մարդ էր : Թաղի ամենաերաժշտասէր ընտանիքներից մէկն էր նրա ընտանիքը . ինքը, մեծ որդին՝ Մասիսը բաւական լուջութակ էին նւազում . կինը՝ տիկին Աղաւենին, դուստրը՝ օր . Հայկանուշը եւ փոքրիկ Զատէնը, մեծը՝ Բարկէնը, ընկերակցում էին նւազին երգով :

Դպրոցում աշակերտները ամենից շատ հաշւի էին առնում Խանէդանեանին, իսկ փոքրերի վրա նա ուզզակի սարսափեցնող ազգեցութիւն ունէր : Դրա գաղտնիքը Խանէդանեանի ծոցատերի մէջ էր : Զրոսանքի ժամանակ, դասամիջոցներին կամ սերտողութեան պահերին, Խանէդանեանը, երկար ցուցամատը ջղայնօրէն դէպի իրեն նետելով, յանցապարտ աշակերտին ասում էր - «Հո՛ս եկուր» : Երբ աշակերտը դալիս էր, նա աւելի բարկացած ասում էր - «Հո՛ս, Հո՛ս, Հո՛ս» : Երբ աշակերտը կանգնում էր այնուղ, ուր պէտք էր, նա գրպանից հանում էր ծոցատերը, ձեռքը ջղայնօրէն ճոճում էր օդի մէջ, գուրս հանում մատիր եւ անխառն վրդովունքով հարցնում - «Ազգանո՛ւնդ, Հո՛ւա» : Եւ երբ ահարեկւած աշակերտը ասում էր աղդանունը, մի ակնթարթ գրում էր ծոցատերի մէջ, ապա նոյն շարժումներով գրապանը դնելով ծոցատերը, ձեռքի եւ դէմքի արագ շարժումով շշմած աշակերտին ասում էր՝ «Գնա» : Այդ գործողութիւնից յետոյ յանցապարտ աշակերտը առնւազն երկու - երեք շաբաթ մնում էր հանդարտ :

Մի օր հետաքրքրւեցի, թէ ի՞նչ է գրում ծոցատերում Խանէդանեանը : - «Ի՞նչ պիտի գրեմ, եղբայր, ահա, տե՛ս», ասաց նա . տետրը վերէն վաս լի էր անորոշ խղբզանքներով :

Թէեւ դեռ երիտասարդ, բայց արդէն տառապած եւ կեանք տե-

սած ուսուցիչներից մէկն էր Առաքել Կապտաննեանը։ Դաշնակցական էր եւ մեծ համակրանք վայելում թաղի երիտասարդութեան մէջ։ Ունեցի էր եւ 1895-ի ջարդերին այնտեղ կորցրել էր հայրը։ Մայրը իր հետ էր, կինը, տիկին Փայլածունը, ապրեց մեծ ջարդերի բոլոր արհաւիրքները եւ այժմ ողջ է։

Ընկերական մտերիմ յարաբերութիւնների մէջ էի Կապտաննեանի հետ։ Կիւրակի օրերը սովորաբար լինում էի նրա մօտ։ Շատ կապտան էի երկու փոքրիկների՝ Հրանգի և Արամի հետ։ Հրանգը 4-5-, Արամը երեք տարեկան էր արդէն։ Մեծը ապշեցնում էր իր սուրմտքով, զատողութիւններով։ Փոքրը՝ ծանրախոհ, լուրջ ու մտագրազ կեցւածքով։ Նրանց հետ էր լինում սովորաբար նաեւ իրենց մօրաքրոջ փոքրիկը՝ Տիրանը։ 4-5 տարեկան գունդ ու զլոր, զիւրաշարժ ու հնորամիտ մի մանչուկ, որ զանազան խաղեր էր յղանում։ Պոլլերը կախում «զանդակներ» չինում, «ժամերգութիւն» էր կատարում, թիթեղի տաւիտով «բուրպառ» էր նետում, մենակ եղած ժամանակ Արամին համոզում էր «մեռնել», թաղման արարողութիւն կատարելու համար, եւայն։

Դպրոցում Կապտաննեանը աւանդում էր հայերէն և հաշւում էր կարող ուսուցիչներից մէկը։

Գրեթէ կզգիացած, ինքնամփոփ կեանք էր վարում մաթեմատիկայի ուսուցիչ Գարեգին Ալբունեանը։ Նախկին հնչակեան էր, Գարահիսարցի, սանասարեանաւարտ։

Ծերութեան ու մանկութեան մի տարօրինակ խառնուրդ էր նա։ Միշտ լուրջ, ինքնամփոփ՝ երբեմն գւարթանում էր որեւէ անարժէք առիթով, և, հակառակ իր ծանր ու պրապող դատողութիւններին, շատ յաճախ նմանում էր մանկան։ Դպրոցում վայելում էր անխտիր ըոլոր ուսուցիչների սէրն ու համակրանքը։ Իր առարկային տիրում էր ամենայն կատարելութեամբ։

Բնադիմութեան դասերը աւանդում էր Վահան Հապեշեանը։ Դաշնակցական էր։ Պատերազմի յայտարարութիւնից առաջ զանը լուսում էր Բերլինում։ Անկարող լինելով վերագանալ, մնաց այնտեղ ու ջարդերից պատեց։ Հանրապետութեան օրերին պաշտօնավարում էր Երեւանում։ Քաղաքացիական կուներից յետոյ տարագիր է։

Վարի զասարաններում թւարանութեան եւ հայերէնի զասերը աւանդում էր Վահան Ազագանեանը։ Կովկասահայ էր։ Ծանօթացել էի նրա հետ Տրավերդոնում եւ, ինչպէս պատահում է երբեմն, կարձ ժամանակում մտերիմացել։ Սամսոնում հաստատւել էր ինձնից մի տարի յետոյ։ Ապրում էինք միասին, կինը եւ երեխաները զանուում էին կիրասոն։ Բաւականաշափ կարդացած եւ իրազեկ երիտասարդ

էր, նոյնպէս դաշնակցական, աշխատել էր Հիւսիսային կովկասում:

Թիւրքերէնի ուսուցիչն էր Սղերզցի Դանիէլը (ազգանունը մոռացել եմ): Դպրոցի գոյութեան վերջին տարում մնացել էր Սղեր-դում:

Դպրոցի անօրէնն էր Արա Մամիկոնեանը : Նոյնպէս Սղերզցի : Դաշնակցական : Բարձրտղոյն կրթութեամբ հայ լաւագոյն մանկավարժներից մէկն էր : Աւանդում էր հայոց եւ ընդհանուր պատմութեան դասեր : Զուսպ եւ համակրելի մարդ էր : Կարողացել էր կարգաւորել եւ երեք տարւայ մէջ նախանձելի զրութեան հասցնել դպրոցը :

Զուգընթաց դպրոցում եւ մանկապարտէզում կային 7-8 վարժուհիներ, որոնցից յիշում եմ օրիորդներ Խոկուի Սիմոնեանին եւ Սաքենիկ Առաքելեանին : Օր Սիմոնեանի մայրը, Ալեմշահ հանումը, որի բնակարանում ապրում էինք Ազադանեանի հետ միասին, մէկն էր այն բազմաթիւ հայ կանանցից, որի մօտ օտարական հայը կարող է իրեն զգալ հարազատ մօր ստեղծած պայմաններում : Միակ ընդհարումը, որ ունինում էի այս անմուանալի կնոջ հետ, առաջանում էր գրսից տուն գալու ժամանակ կօշիկներս ներքեւում չհանելու, կամ դոնէ չմաքրելու պատճառով :

Սամսոնի դպրոցում հաստատել էի 1912 թւի աշնանամուտին, Ռոստոմի չնորհիւ : Ներքին նաւազնացութեան Ռուս. Սոց. Յեղափոխական կուսակցութեան նաւաստիների կազմակերպութիւնը Պոլում քայլայել էր, թիւրք իշխանութիւնների ձեռք առած միջոցների հետեւանքով՝ ուսւ դեսպանատան մի շարք թիմումներից յիտոյ : Կազմակերպութեան անդամներից Միխայլովը, Ադամովը վախինել էին Եղիպատոս : Կենարոնական Կոմիտէի ներկայացուցիչ Գործելը (Նաստաձէ), որի հրահանդով Բարագէթից՝ Երզրումի եւ Տրապիզոնի վրայով՝ եկել հասել էի Պոլիս, ապաստանել էր կղզիներից մէկում, ուր քիչ յետոյ արեան վարակում ստացաւ եւ մեռաւ : Բագւի բանտիք ընկերներից հրեայ Դաւթիթը Պոլսից Կովկաս անցնելու ժամանակ ձերբակարել էր Բաթումում : Ես, թէեւ հետապնդումներից զերծ էի, բայց նիւթական դժւարութիւններ ունէի եւ յայտնի չէր վիճակս : Հանգուցեալ Խաժակի ձեռք առած միջոցները, ինձ որեւէ դպրոցում տեղաւորելու համար, արդիւնք չունեցան : Ուշ էր արդէն, ամէն տեղ լրիւ էին ուսուցչական կազմերը : Այս պարագաներում պարզ էր, որ երկար չէի կարող մնալ Պոլսում :

Ռոստոմը, որ հեռուէն հեռու միշտ ամէն բանի իրազեկ էր, երեւի գիտէր եւ իմ դրութիւնը : Այդ պատճառով բոլորովին չզարմացայ, երբ մի օր վիզոցում պատահելով ասաց :

- Համ', լսու է, որ քեզ տեսայ, պատրաստիր, չուտով գնալու հնգ:

Հասկացւեց, որ պէտք է մեկնեմ էրզբուժ։ Իսկ այն հարցիս, թէ
ինչ պիտի անեմ այնտեղ՝ պատասխանեց.

- Ե՞կ բան կանես, է՛լի, ու միասին կապըենք:

Քիչ յետոյ մեկնեցինք : Առաւօտ էր, երբ մեր նաւը խարիսխ նետեց Սամսոնի բացերում : Ծովի վրա փոթորկուա գեշեր էինք անցրել ևս որովհետեւ նաւը 2-3 ժամ մնալու էր Սամսոնում, անհամբեր սպասում էինք նաւակներին ափ իջնելու համար :

Ապում մեր տուաջին այցելութիւնը տւինք դպրոցին։ Ծանօթա-
նալով սւսուցիչների հետ, ևս զուրս ելայ հոյակապ եկեղեցին տես-
նելու, որը դպրոցից մի քանի քայլի վրա էր։ Եթե վերադարձայ,
տնօրէնը յայտնեց, թէ խիստ կարիք ունեն ուսուցչի, եւ խնդրեց
որ մնամ Սամաննում։ Հարցը, ի հարկէ, կախւած էր Խոստոմից,
իսկ նա անմիջապէս հասկացաւ, որ ուզում եմ մնալ եւ իր անշմա-
րիկի ժայռով վրուին օրորեց ու տաց։

- Այդպէս, ուրեմն, ուզում ես այստեղ մնալ. դրա՞ համար քեզ
մինչեւ այստեղ բերի:

Մի քանի օր յետոյ հասկացալ, որ ուսուցչի ոչ մի «խիստ» կարիք չկար, և Ռոստոմը պարզապես ինձ տեղաւորել էր Սամսոնում:

Որքան գիւրին ևզաւ դործ զանելու, այնքան դժւար էր կատարելլը: Բոլորովին անձանօթ մի ասպարէզ, առանց որեւէ մանկավարժական մասնագիտութեան եւ դրա հետ միասին կովկասահայ բարբառ, ինչ որ փոքրերին միշտ հասկանալի չէր: Եւ որովհետեւ ես ինքո էլ չղիտէի, թէ ինչ դաս կարող եմ տալ, ինձ դարձրին վերակացու: Դրա հետ միասին աչքիս առաջ պատկերացաւ Գանձակի քաղաքային գոլրոցի Պաւլի վարժապետը, որ ձմբան օրերին դպրոց էր դաշտիս կոնջ շալլ ուսերին, եւ պոռալով ասում էր սուսերէն ու ցածր ձայնով թարգմանում հայերէն, թէ «լո՛ւք ծնւել էք իբրեւ մի ժոհ կտոր»:

Նշանակում է, պէտք է ահարեկէի աշակերտներին, որ հանգիստ մնան : Առաջին ասիթով ես մի չար աշակերտի սպառնացայ, թէ «քեզ ցոյց կը տամ» : Քիչ յետոյ տեսայ, որ փոքրերը իրար հետ կուելով, նոյն բանն են ասում : Ու գործը քանի գնաց ծանրացաւ ու ձայնս խզեց : Տնօրինը ինձ մէկ-երկու անդամ խորհուրդ տւեց մեղմ վարւել, ըայց ալդ էլ օպուտ չունեցաւ :

Վերջապէս, իմ ինպով ինձ մարմնամարզի դասեր տւին, ինչ
որ միանգամայն անսպասելի կերպով հիմնաւորապէս փոխեց իմ
դիրքն ու դրութիւնը դպրոցում: Առարկայի մասին ունեցած պաշտ-

րիս հիմքը ստացել էի քաղաքային դպրոցում, ուր դասաւանդութիւնը դրւած էր լաւ հիմքերի վրա եւ պարտադիր առարկաներից մէկն էր: Այնուհետեւ երկար տարիների ընթացքում թէ բաւականաչափ կարդացել եւ թէ սիրողի հանդամանքով պարապել էի այդ գործով: Յատկապէս լաւ դիտէի շարքային, կամ, այսպէս կոչւած, շւէտական մարզանքը՝ իր բոլոր հին ու նոր համակարգութիւններով, բարդ ու պարզ երանգներով եւայլն:

Առաջին մէկ օրից ահապին յաջողութիւն ունեցայ: Եւ ինչ որ շատ զարմանալի էր, ամենից չար աշակերտները ամենաուշագիր եւ ամենաջանասէրն էին մարզանքի դասերում: Տնօրէնը, ուսուցիչները, որոնք, ըստ երեւոյթին, խիստ մահոգւած էին իմ մանկավարժական կարողութիւնների մասին, այժմ չափազանցւած գովեստներով խրախուսում էին ինձ: Մի ամիս յետոյ, ձեռք բերի մէկ հատ զինւորական թմրուկ, համազգեստ հաստատեցի եւ աշակերտները դուրս հանեցի դէպի թուամանի լաշտերը: Ու երբեք չեմ կարող մոռանալ այն խանդավառութիւնն ու ոգեւորութիւնը, որ առաջ բերեց թաղի մէջ աշակերտների շարքերի քարացած երթը: Հետաքրքրութիւնը երիտասարդութան մէջ դէպի դպրոցը զգալապէս բարձրացաւ: Նրանց ջանքերով եւ յատկապէս Օննիկ Պալրդճեանի աշխատանքների շնորհիւ մարզանքի օգտին մի երեկոյթ կաղմակերպւեց, որը մեծ յաջողութիւն ունեցաւ: Հասոյթը ամբողջութեամբ յատկացւեց նւազի գործիքների, որոնք տեղ հասան մի ամիս յետոյ եւ իրարանցում առաջ բերին թաղի մէջ: Ալդ սղնձէ գործիքներից ամենից շատ տպաւորութիւն թողին թաղի մէջ բասերը ընդհանուր կարծիքն այն էր, որ նւագողը պէտք է առողջ թոքեր ունենալ: Փոքրերը ձեռքով շօշափելու կամ ուեէ գործիքից փչելու մարմանջ ունէին: Իսկ մեծ մասը ձգտում ունէր հայելու պէս դիտել մեծ թռմրուկի փորը, հասկանալու համար, թէ ինչ ձեւ կրստանայ իր դէմքը այնտեղ: Այնուհետեւ սկսեցին նւագածուների պարապետները եւ ուսուցիչների կաղմի վրա աւելյացաւ երաժիշտ Օննիկ Պալրդճեանը: Դպրոցում մարզանքի դասերը պարտադիր առարկաների շարքն անցան եւ ժամերը շատացան:

Տարւայ վերջին տեղի ունեցաւ դպրոցի առաջին դաշտահանդէսը՝ քաղաքի մութեսարիփ Նէջմի-բէյի պատւառը նախադահութեամբ: Թաղի բնակչութիւնը ամբողջութեամբ ներկայ էր: Կային չիւանդ հանդիսականներ, որոնց համար յատուկ տեղ էր յատկացւած: Կային բաւական թւով յոյներ, թիւրք զինւորականներ: Իսկ երբ մօտ 300 աշակերտների շարքերը նւազախմբի առաջնորդութեամբ դաշտի կամարներից ներս անցան՝ հայ հասարակութեան



ԱՅԱՄԱՆԻ ԳԹՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՊՈՐՄՆԱԱՐՁԸ ԹՈՌԱՄԱՆԻ ԳԱՇՏԵՐՈՒՄ

(Զախից աշ՝ ուսուցիչներ Ծն. Պալրդ Ֆեան, Վահ. Աղաջանեան, Մատ. Խանկանեան, Արթ Մամիկոնեան, Կշան Զատրբճեան,
Երև. Խանկանեան, Վահ. Մենախորեան):

խանդավառութիւնը վերածւեց երկարատև ցոյցի: Ի՞նչն էր պատճառը, սառուզապէս չգիտեմ, թւում է, թէ այդ ամենը հեռաւոր շփման մէջ էր աղքայնապէս և քաղաքականորէն արդէն իսկ վերածնուած այդ օրերի հայութեան իդէալների հետ:

Դպրոցը իր բարեկարգ վիճակով և յաջողութիւններով մի խոշոր չափով պարտական էր թաղական խորհուրդին, որի անդամներն էին նազիւան, ձինիվիզիւան և Մառուկիւան էֆէնդիները: Համեստ, բարեկեցիկ վաճառականներ էին սրանք և իրենց բոլոր աղատ ժամանակը նւիրել էին դպրոցին: Թաղի մէջ կային սրանց հաւասար աշխատող մարդիկ, որոնցից յիշում եմ Մուրապիկ էֆ: Կերեանին և Մանուկ իսիշեանին: Սամսոնի առաջնորդն էր Կիւրինցի Զաւէն վարդապետը, չին հոգեւոր աւանդութիւնների մի մարդ, իր դերին ու պաշտօնին գիտուի մի պարկիշտ հոգեւորական: Թաղը իր առաջնորդով մի խոշոր նահապետական ընտանիքի նման էր: Առաջնորդարանի երկու զաւադներից մէկը՝ Հաջի աղան մի հաղւագիւտ անձնաւորութիւն էր: 60-65 տարեկան առողջ, բարձրահասակ, դիւրաշարժ Հաջին թաղի առաջին հայ մարդն էր, բայց հայերէն չգիտէր, ինչ որ նրա համար թշւառութեան հաւասար դժբախտութիւն էր: Կեսարացի էր և շատ յաճախ տփսոսում էր այնուեղ ծնւելու համար: Բայց Հաջին քաջ գիտէր Սուրբ գիրքը, Աւետարանը: Եւ, ինչ որ զարմանալի էր, իր ամբողջ խորութեամբ իւրացրել էր քրիստոնէական վարդապետութեան փիլիսոփայութիւնը: Այս առումով մի բնածին տաղանդ էր Հաջին: Իսկ իր էութեամբ կատակոմբների առաջին քրիստոնեաններին նման էր: Հաջու հետ շատ մտերիմ էի: Ընդունակ էր իսապաղութիւն ներչնչել մարդու, հոգեկան ամենածանր վիճակներում:

Առաջնորդի հետ միասին թաղի գործերով զբաղւում էր Թաղական Խորհուրդը: վարում էր թաղի և իշխանութեան յարաբերութեան վերաբերուղ հարցերը, ընդհանուր թաղային, դպրոցական, եկեղեցական գործերը: Խորհուրդի նախագահն էր Թումարգալեան էֆենդին:

Թաղի երիտասարդութեան հասարակական-քաղաքական տրամադրութիւնները գլխաւորող միակ կուսակցութիւնը Հ. Յ. Դաշնակցութիւնն էր: Կաղմակերպութիւնը, Սամսոնում տիրող ընդհանուր ողու համաձայն, աւելի շուտ նման էր կուլտուրական - հասարակական միութեան: Այնպէս որ դաշնակցական, չէղոք եւ համակիր երիտասարդութեան մէջ շեշտած տարրերութիւններ չկային: Սակայն, եղած չեղած հինգ-վեց հնչակեանները, որոնք դա՛րձեալ ոչնչով չէին տարբերում միւսներից, յատկապէս որակեւում էին իբ-

բեւ այդպիսին. այսպէս, օրինակ, ամէն մարդ գիտէր, որ Ղաղար-եան եղբայրները «Հնչակեաններ» են, իսկ թէ ինչի մէջ էր կայա-նում փաստօրէն նրանց հնչակեանութիւնը, ոչ ոք չէր կարող բացա-տըրել:

Հ. Յ. Դաշնակցութեան Զանիկի շրջանի կենտրոնական Կոմիտէն գտնուում էր Սամսոնում: Անդամներն էին -

Գարեգին Թէրզեանը, Կարնեցի, 40-45 տարեկան, Հրայրի լաւա-դոյն ընկերներից մէկը: Բանախց ազաւուել էր թրքական յեղափո-խութիւնից յետոյ և նախ քան այդ, տասը տարւայ կեանք էր մա-շել կարնոյ բանուում: Հակառակ իր քաշած տասապանքներին՝ կեն-սուրախ, ոսմանտիկ բնաւորութեան տէր մէկն էր: Տեղահանութեան նախօրեակին մէծ պատուհանի չափ մի փոքր խանութիւն էր բացել և դրազւում էր գրենական պիտոյքների վաճառքով:

Միհրան Ֆիրանեանը կիւմենցի էր, 30-35 տարեկան, առեւտրա-կան զրասենեակ ունէր: Խոճուն, զործնական, վաստահութիւն վայե-լող կուսակցական գործիչ էր: Դրսի յարաբերութիւնները, զէն-քի վերաբերող հատ ու կտոր գործերը վարսում էր Միհրանը: Բն-կերների մէջ յայտնի էր իրրեւ «խորէ մասլահատձի»: Այդ պատ-ճառով, բոլոր այն դէպքերում, երբ հաշտեցներու, համաձայնեցր-նելու խնդիր կար, զործը յահճուում էր Միհրանին:

Յարութիւն Պօղոսեան, արեւմտահայ ընտիր ոսկերիչներից մէկն էր: 40-45 տարեկան, աւելի շատ հասարակական քան կուսակցական գործիչ էր: Հարուստ գերասանական ձիրք ունէր և թաղի յայտնի «Բաղդասար Ազրարն» էր: Թաղի մէջ կազմակերպւած բոլոր հան-դէսների, ներկայացումների, երեկոյթների մէջ Յարութիւնը առա-ջին անձն էր:

Միհրան Ֆինեանը նոյնպէս ոսկերիչ էր, 30-35 տարեկան: Պօ-ղոսեանի հակապատկերն էր և իրրեւ կուսակցական գործիչ աւելի հակամէտ էր գաւաղբական, քան լայն հասարակական աշխատանք-ների: Յոսեմես և կասկածամիտ բնաւորութիւն ունէր:

Տիգրան Քիւրքնեանը Մարզւանցի էր, 30-35 տարեկան. պաշ-տօնավարում էր Սամսոնի և Մարզւանի միջեւ առեւտրական գոր-ծառութիւններ վարող Մատթէոս-աղայի մօտ: Ուշիմ, շատ զգոյշ, պարզ ու համեստ կուսակցական գործիչ էր:

Գեր-Մելքոնի, որի ազգանունը մոսացել էմ, Ամասիացի էր: Բաւական բազմանդամ բնաւանիք ունէր և անովանդով զաշնակցա-կան էր: Շէն, հիւրասէր բնկերներից մէկն էր: սիրում էր յայն հա-սարակական գործեր, զարոց, զաշտահանդէս, ներկայացում եւայրն: Զբաղւում էր առեւտրով: Շատ յաճախ բացակայում էր քաղաքից:

Թաղում կար դաշնակցական տուն կամ ակումբ, չէնքը սիրայօժար վարձու էին տեղ Ղաղարեան հնչակեան եղայրները։ Ակումբի ընթերցարանը հաւասարապէս յաճախում էին թէ կուսակցական, թէ անկուսակցական երիտասարդներ։ Սրանց մէջ կային խոստումնալից անձնաւորութիւններ, որոնցից յիշում եմ՝

Յակոր Գալուստեանին, որն աշխատում էր Իբրահիմոսեանների տեղական վաճառատան մէջ։ Յակորը իր երկու անբաժն ընկերների՝ Նշանի և Գալուստի հետ միասին դաշնակցական էր, հետեւում էր կուսակցութեան գործերին եւ շատ մեծ յարդ ունէր երիտասարդութեան մէջ։

Պարունակ Քէռուզլեան, որ պաշտօնավարում էր մի առեւտրական ընկերութեան մէջ։ Պարունակը նոյնպէս դաշնակցական էր։ Անսպառ եւանդի տէր մի երիտասարդ, աշխատում էր թէ՛ կուսակցական, թէ հասարակական լույսը ասպարէզներում։

Օրոն Հէֆիմեան, որ հօր եւ եղբօր հետ միասին վարում էր Փըրանսական Փաքէ նաւային ընկերութեան գործերը։ Խոհուն եւ լուրջ կուսակցական ընկերներից էր։ Զարդից պատահաբար խուսափել է, արտասահման մեկնած լինելու շնորհիւ. այժմ ապրում է Փարփզում։ Հայրը, Եղբայրները ջարպւած են։

Հրանդ Պալըզնեան, որ Եղբայրների հետ վարում էր «Նեստէ» ընկերութեան գործակալութիւնը։ Հրանդը անձնէր երիտասարդներից մէկն էր. դաշնակցական էր, բայց աւելի հակամէտ էր լայն հասարակական գործերի։ Եղբայրների հետ իբրեւ պարսկահպատակ, խուսափել է ջարդից։ Այժմ գտնուում է Ամերիկայում։

Միիրան Պալըզնեան պաշտօնավարում էր Իբրահիմոսեանի վաճառատան տեղական բաժանմունքում։ Դաշնակցութեան համակիրներից էր։ Իբրեւ պարսկահպատակ նոյնպէս խուսափել է ջարդերից և այժմ Եղբայրների հետ միասին գտնուում է Բրիտանիա։

Հայկ Խրիմեան, որը կառավարութեան մօտ թարգմանչի պաշտօն էր կառարում։ Բաւական լու գիրք ունէր Մութեսարիֆի մօտ և կառավարութեան հետ եղած յարաբերութիւնների մէջ օգտակար էր լինում թաղին։ Կենսութափ, թիւրքերէն սփանչելի երգող, «ուղ» նապաղ, մարմնակրթութեան շօշափելի արդիւնքների հասած անկուսակցական երիտասարդներից մէկն էր։

Իր ընկերային կազմով Սամսոնի հայութիւնը կարելի էր բաժանել երեք խաւերի՝ ունեւորներ, միջակներ, չքաւորներ։

Առաջինները հազիւ կազմում էին 7-8 ընտանիք, վերջինները թէւ աւելի շատ էին, բայց ընդհանրապէս որեւէ եկամուտ ունէին եւ, ինչպէս ասում են, առանց գլուխ ծոելու կարողանում էին ապ-

րել։ Թաղի ստուարագոյն մասը նիւթական միջին վիճակ ունէր և վարում էր բարեկեցիկ կեանք։

Քաղաքի հայ-թրքական յարաբերութիւնները ամենաբարօք դը-րութեան մէջ էին և նախ քան ջարդերը, երեք տարւայ ընթաց-քում, չեմ յէշում մի դէպք, որ երկու հարեւան ժողովուրդների խա-զադ, բարեկամական յարաբերութիւնները խախտւած լինեն։ Տնտե-սական բնագաւառում Սամսոնի հայերը ներքին չուկանները իրար հետ կապելու և արտաքին չուկանների հետ յարաբերութիւն հաս-տատելու մէջ ահազին գործ էին կատարում։ Եւ այս հողի վրա նը-րանք ոչ միայն մը բցակիցներ չէին թիւրք ունեւոր առեւտրական գասի համար, այլեւ կազմում էին անհրաժեշտ մի տարր, որ իր միջնորդի զերով զարդ էր տալիս երկրի տնտեսական կեանքին, նը-պաստելով առեւտրական գործառնութիւնների զարգացման։ Քաղա-քականապէս Սամսոնի հայութիւնը իր հոծ բազմութեամբ թէեւ գերծ չէր համազգային կոչէալներից, բայց, ինքն իրեն դուրս զգա-լով հայաստանից, տեղում դպրոցական, մշակութային, եկեղեցա-կան ասպարէզներում իր գործերը կարգաւորելու հնարաւորութիւ-նից զատ ուրիշ ոչ մի պահանջ, կամ սպասելիք չունէր։ Եւ թիւր-քերի մէջ կային բազմաթիւ մարդեկ, որոնք բարեկամական յարա-բերութիւնների մէջ էին հայերի հետ։

Իշխանութեան հետ ունեցած յարաբերութիւնների մէջ Սամսոնի հայութիւնը համարում էր օրինակելի ազգ։ Նախ ոչ մի վէճ թիւր-քերին չէր հասնում։ Իրենք իրենց մէջ էին կարգագրում։ Ապա, ա-մենայն ճշութեամբ կատարում էին իրենց վրա ընկած հարկային, տուրքային եւ այլ քաղաքացիական պարտականութիւնները։

Իր հերթին, թիւրք իշխանութիւնների վերաբերմունքի դէմ էլ գտնուելու հիմք չկար։ Թիւրքը չէր խառնուում թաղի ներքին գոր-ծերին, եւ ապրելով թաղի մէջ՝ ամիսներով կարելի էր ոստիկանի երես չտեսնել։ Մութեսարիփ նէջմի բէյը, Սէրկոմիսար Սարբի-բէյը, անգամ մանր պաշտօնեաները՝ փոլիս գուրսունը, զամին, էմինը եւային համարում էին հայերի բարեկամներ։

Զանիկի շրջանի գիւղերից երբեմն լուրեր էին հասնում յոյների եւ Բալկանեան պատերազմից յետոյ այդ շրջանները գաղթած մու-հաճիրների ընդհարումների մասին։ Բայց ընդհարման ոչ մի դէպք տեղի չէր ունեցել հայ գիւղացիութեան հետ։

Այս է պատճառը, որ երբ մարդ, տարիներ յետոյ, ծանօթա-նում է ջարդերի չուրջը եղած եւ հայութեան դէմ ուղղւած մի-տումնաւոր մեկնութիւններին, համակւում է անսաելի զառնու-թեամբ . . . :

(Շարտանկելի)